ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 18 հունվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1850-Ա որոշմամբ 2019 թվականի մայիսի 31-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի նոյեմբերի 15-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի մայիսի 31-ին Աշխաբադ քաղաքում՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև թանգարանացուցահանդեսային փոխանակման զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագիրը ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության կառավարության (վերապահումով), Հայաստանի Հանրապետության կառավարության (հատուկ կարծիքով), Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության, Ղրղզստանի Հանրապետության կառավարության, Ռուսաստանի Դաշնության կառավարության, Տաջիկստանի Հանրապետության կառավարության, Թուրքմենստանի կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև (այսուհետ՝ Կողմեր):

Համաձայնագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության կողմից վերապահում ներկայացնելու առնչությամբ Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել հատուկ կարծիքով, որում նշված է. «Ադրբեջանի Հանրապետության կողմից՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի վերապահում ներկայացնելու առնչությամբ, որում Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունն աղավաղված է, հայկական կողմն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ էթնիկական զտումների քաղաքականության իրականացման և ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) դեմ ռազմական ագրեսիայի սանձազերծման արդյունք է: Ադրբեջանի Հանրապետությունը կրում է ամբողջ պատասխանատվությունը հայկական մշակութային ժառանգության ամբողջական վերացմանն ուղղված՝ տասնամյակներ շարունակ իրականացվող քաղաքականության համար, որի արդյունքներից մեկն էլ Հին Ջուղայի (Նախիջևան) հայկական գերեզմանոցի հազարավոր եզակի խաչքարերի ու տապանաքարերի վերացումն է: Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ չի կիրառի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի դրույթները՝ մինչև Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերջնական կարգավորումը»:

3. Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմին է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2019 թվականի նոյեմբերի 17-ին. այն ուժի մեջ է Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի

Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության համար:

5. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ստեղծել բարենպաստ պայմաններ ԱՊՀ մասնակից պետությունների միջև թանգարանացուցահանդեսային փոխանակման զարգացման համար (Հոդված 1),

- երաշխավորել Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի կողմից Հայաստանի Հանրապետությանը թանգարանացուցահանդեսային փոխանակման շրջանակներում ուղարկվող թանգարանային առարկաների պահպանվածության և ժամանակին վերադարձի, ինչպես նաև դատական անձեռնմխելիության, հայցի ապահովմանն ուղղված միջոցների նկատմամբ անձեռնմխելիության և դատարանի որոշումը կատարելու մասով անձեռնմխելիության ապահովումը (Հոդված 2),

- խրախուսել Համաձայնագրի մասնակից պետությունների պատմությանը, մշակույթին և արվեստին նվիրված համատեղ ցուցահանդեսային նախագծերի նախապատրաստումն ու իրագործումը, այդ թվում՝ համացանցի օգտագործմամբ (Հոդված 3),

- նպաստել Համաձայնագրի մասնակից պետությունների թանգարանների համատեղ գիտական ծրագրերի կազմակերպմանն ու իրագործմանը՝ հնագիտության, ռեստավրացիայի, փորձաքննության և ատրիբուցիայի, բնական ժառանգության ուսումնասիրության բնագավառում (հոդված 4),

- Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մշակութային համագործակցության խորհրդի շրջանակներում Կողմերի հետ պարբերաբար անցկացնել խորհրդակցություններ թանգարանային գործի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների գերակա ուղղությունները որոշելու վերաբերյալ, կազմակերպել գիտական տեղեկատվության միջթանգարանային փոխանակում, աջակցել թանգարանագիտության վերաբերյալ տեղեկատվական տեղեկագրերի և գիտական ժողովածուների պատրաստմանն ու թողարկմանը (Հոդված 5),

- խրախուսել թանգարանային գործի բնագավառում արդիական խնդիրների շուրջ համատեղ գիտական, գիտագործնական համաժողովների ու սեմինարների, կլոր սեղանների անցկացումը, ինչպես նաև նպաստել մասնագետների փոխադարձ մասնակցությանը Համաձայնագրի մասնակից պետություններում անցկացվող նույնանման միջոցառումներին (Հոդված 6),

- իրականացնել համագործակցություն թանգարանային աշխատողների, այդ թվում՝ հաշվառման և պահպանման գործունեության, էքսպոզիցիոն-ցուցահանդեսային գործունեության, էքսկուրսիոն, մշակութային ու լուսաբանման գործունեության գծով մասնագետների՝ թանգարանային առարկաների ռեստավրացիայի և պահպանման ոլորտում վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև միջթանգարանային ստաժավորումների, թանգարանային գործունեության հիմնական ուղղություններով վարպետության դասերի կազմակերպման, Համաձայնագրի մասնակից պետությունների առաջատար թանգարանային կենտրոններում հեռավար ուսուցման համար պայմանների ու տեխնիկական հնարավորությունների ստեղծման գործում (Հոդված 7),

- Կողմերի հետ իրականացնել փորձի փոխանակում ցուցահանդեսների կազմակերպման ժամանակ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև թանգարանային առարկաների պահպանման, ռեստավրացիայի և կոնսերվացման բնագավառում (Հոդված 8),

- Կողմերի հետ իրականացնել ներառական թանգարանային նախագծերի ու ծրագրերի իրագործմանն ուղղված թանգարանների աշխատանքի փորձի փոխանակում (Հոդված 9),

- սատարել ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության կողմից ԱՊՀ մասնակից պետություններում թանգարանային գործի մասսայականացմանն ուղղված՝ «թանգարանային գործ» ուղղվածությամբ ինտերնետ-ռեսուրսի ստեղծմանն ու զարգացմանը (Հոդված 10),

- ցուցաբերել փոխադարձ աջակցություն թանգարանային առարկաների պատկերների թվային պատճենների պատրաստման ու փոխանակման գործում՝ գիտական ու մշակութային գործունեության մեջ դրանք օգտագործելու նպատակով (Հոդված 11),

- Կողմերի հետ միավորել ջանքերը ԱՊՀ մասնակից պետությունների ազգային թանգարանների հավաքածուներից կազմված մշակութային ժառանգության քարոզչության գործում (հոդված 12):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ թանգարանային գործի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի
ՍԴՈ-1624